

«ՅՈՒՆԱՍՏԱՆ ԿՐԱՅ
ՊԱՏԵՐԱԶՍԻԼ ԹՈՒՐԲՈՅ ՀԵՄ...»

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ. 9 (ՌԵՍԹԸՐ).- Յունաստանի վարչապետ Քոսթաս Սիմիթիս Երեքշաբթի օր Սպիտակ Տուն ալցելեց եւ նախագահ Քլիմբընի յայտնեց, որ իր երկիրը կը բնակեցնէ իր կղզիները պաշտպանելու համար. սակայն կը նախընտրէ. որ հարցը լուծուի միջազգային ասեանին համբով:

Քլիմբըն - Սիմիթիս խորհրդակցութեան մէկ առանցքն ալ տնտեսական գործակցութեան ծրագիրներն էին:

ՀԱՐԱԷ ՊԻՏԻ ԿՃԱՐԷ
ՆԱԷԻ ԻՍՐԱՅԷԼԻ
ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԻՆ

Հակառակ Իսրայէլի վարչապետին եւ այլ պատասխանատուներու խուսափողական յայտարարութեանց, հարաւային Լիբանանի եւ Գալիլիոյ շրջաններուն մէջ վերջին 48 ժամերու իրադարձութիւնները եկան ցոյց տալու, որ Հարաւը անգամ մը եւս խաղաղարտի վերածուած է Իսրայէլի մէջ ընտրապայքար մղողներու միջեւ:

ՔԼԻՆԹԸՆ - ԵԼՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ, 9 (ՌԵՍԹԸՐ).- Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Քլինթըն եւ Ռուսիոյ նախագահ Պորիս Ելցին երեքշաբթի օր ունեցան 40 վայրկեան տեւողութեամբ հեռաձայնային խօսակցութիւն մը:

Սպիտակ Տան մէջ բանրեր ըսաւ, որ երկու նախագահները գրուցած են կորիզային գէնքերու յառաջիկայ համաձայնագիրին, ինչպէս նաեւ ապագինման ծրագիրներու մասին: Մանօթ է, որ այս հարցերը յառաջիկայ շարաժ Մոսկուայի մէջ նիւթ պիտի ըլլան գերատնիսանքի մը, իսկ Ելցինն Քլինթըն Մոսկուայի մէջ տեսակցութիւն պիտի ունենան 21 Ապրիլին:

Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ Կ. ԿՈՍԻՏԷԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՒ ՄԵԹՐ Շ.
ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՍԸՐԻ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչ ընկերներ եւ նախարար մեթր Շան. Պարսուեան երէկ ալցելութիւն մը տուին ներքին գործոց նախարար Միշէլ Մըրի:

Հանդիպումը առիթ մը եղաւ խորհրդակցելու Լիբանանը յուզող ալժմեական հարցերու, որոնց շարքին՝ Հարաւի իրադարձութեանց եւ ընտրական օրէնքին շուրջ:

ԱԿՆԱՐԿ
ԹՈՒՐԲՈՅ - ԻՍՐԱՅԷԼ
«ԱՔՏԱՆ»Ը ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԻ

Վերջին երկու օրերուն, Թուրքիա ոգի ի բոլն աշխատանքի լծուած է. իր արաբ եւ իրանցի զբաղելներուն մտահոգութիւնները փարատելու համար: Թուրքիա կը փորձէ անոնց հաւաստիք տալ. թէ Խարալէլի հետ Փետրուարին իր կնքած զինակցութիւնը անոնց համար վնասակար բան մը չէ եւ թէ անոր մասին տրուած լուրերը խեղաթիւրուած են, չափազանցուած են եւայլն:

Միջին Արեւելքի պատմութեան մասին ամէնէն մակերեսային ծանօթութիւնը ունեցողն անգամ չի կրնար համոզիչ գտնել Թուրքիոյ այս հաւաստիքները: Իրենց բիկուկները արեւմտեան երկիրներու զօրակցութեամբ ամբացնող Թուրքիա եւ Խարալէլ փաստօրէն ստեղծած են «աքցան» մը, որուն ակտներուն մէջ կ'ուզեն առնել Խրանէն միջնէն Սուրիա, ինչու չէ՞ նաեւ աւելի արեւմուտք եւ հիւսիս տարածուող շրջաններ. յատկապէս այն երկիրները, որոնք կը փորձեն ինքնիշխան ըլլալ. իրենց շահերն մեկնելով քաղաքականութիւն վառել. ինչ որ կրնայ բացարձակապէս նաեւ չբռնիլ արեւմուտքի պոստերուն:

Միջին Արեւելքի պատմութեան ծանօթներուն նաեւ յստակ է, որ Խարալէլ եւ Թուրքիա շրջանին մէջ եղած են ու կը մնան «սխալ ծայրանքի»ի համագոր երկու երկիրներ, որոնց քաղաքականութիւնը միշտ ալ հիմնուած է զրացիներուն հանդէպ բշտամանքի. իրաւագրկումի եւ բնադատութեանց վրայ: Այս իրողութեան փաստացի վկայութիւնները, ինքնին, ամբողջ պատմութիւն մը ունին. Հարաւի վրայ Խարալէլեան երեկուան յարձակումը, Կիւրդսի եւ Յունաստանի դէմ Թուրքիոյ իրեքայեղոր բշտամանքները, Սուրիան ու Խաբը ջուրէ գրկելու անոր արդէն սովորութեան կարգ անցած ընթացքը եւ Խրանի մէջ դեռ երէկ բացայայտուած լրտեսական ցանցը միայն նորագոյն եւ աչքառու օրինակներ են: Խարալէլի պարագային՝ անոր հետ խաղաղութիւն կնքած դրացիներն անգամ գիտն են գործնապէս փաստած են, որ Խարալէլի հետ հաշտութիւնը միայն նուազ վնասաբեր է, ոչ թէ օգտակար եւ շահաբեր՝ իրենց համար, ինչպէս վայել է իրարու բարեկամ ու դրացի երկիրներու համար:

Թուրքիա - Խարալէլ «աքցան»ը, խորքին մէջ, շրջանին մէջ ուրուագծուող նոր իրավիճակի մէկ ինչ գիծին անփոփոխ շարունակման արտայայտութիւնն է: Եւ անոնց դրացիներուն մտավախութիւնները արդար եւս անկասկած:

Ս. Մ.

ԱԶԳԻԱԿ
AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTENAIRE
ازتاک حیدرہ صومۃ سناسۃ و ادبۃ - الدیرۃ السوۃ و ایشاد و رویشیان
1000 Լ.Ո. 71000 ՏԱՐԻ, ԹԻԲ 31(19331) ԶՈՐԵԶԸՄԻԹԻ, 10 ԱՊՐԻԼ, 199610 ԷՁ

ԱՍՍՏ - ՓԵՐԷՍ
ԳԵՐԱՍՏԻՃԱՆԻ ԾՐԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱՂԷՄ, 9 (ՌԵՍԹԸՐ).- Խարալէլի վարչապետ Շիմոն Փերէս Երեքշաբթի օր հրապարակուած յայտարարութեան մը մէջ յայտնեց, որ գերատնիսանքի մը ունեւալու համակ մը ստացած է Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատէն:

Փերէս դիտել տուաւ սակայն, որ Ասատ գերատնիսանքին համար թուական մը չէ առաջարկած: Փերէս աւելցուց, որ գերատնիսանքի առաջարկը ինքն երկայացուցած էր Ասատի՝ ամերիկացիներուն միջոցով. դիտել տալով որ եթէ Սուրիա իրադրութիւն կ'ուզէ, պէտք է արագ աշխատի եւ պէտք է բարձրաստիճան մակարդակի վրայ բանակցի: Ասատ, իր կարգին, ամերիկացիներուն միջոցով փոխանցած է գերատնիսանքի մը իր համաձայնութիւնը:

«ՆԱՆԻ՝ ԿՈՒԱՆԸ»

ԴԱՄԱՍԿՈՍԻ մէջ, պաշտօնական բանքեր մը յայտարարեց, որ Սուրիա - Խարալէլ գերատնիսանքի մը համար, նախապայման է Կոլոնի պարպումը:

«Գերատնիսանքի գաղափարը լաճալի արժարծուած է, նաեւ եւրոպացի եւ ամերիկացի բանագնացներու միջոցով, սակայն Սուրիոյ պատասխանին մէջ միշտ ալ շեշտուած է որ նախ պէտք է Կոլոնը պարպուի», ըսաւ բանքերը:

«ԴՐՈ» ԽՍՐԱՎԻ ԴԱՍԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԹԵԼԵՎԿՈՒԵՅ ԻՐ ԱՄԻՍԻ ՓՈՒԼԸ

ԴԱՏԱԽԱՅԸ ԻՐ ՄԵՂԱԴՐԱԿԱՆԸ ՀԱՍՑՐԵՑ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՄ ԱՆՅԻՄՆ ԶՐՊԱՐՏԱՆՔԻ
ԱՌԱԵԼԱԳՈՅՆ ՊԱՏԻՐՆԵՐ ՊԱՇՏՆԱՊՈՒԵՅ ԲՈՒՈՐ ԱՄԲԱՍԱՆԵԱՆՆԵՐԻ ԴԱՍՏԱՄԵ

ՅԱՏՈՒԿ ԹԼԹԱԿՑՈՒԹԻՒՆ.- «Դրո» խմբակի դատաւարութեան ընդհատուած նիստը վերսկսուեց Ապրիլի 9ին: Պետական մեղադրող Գրիգորեանը դատարանին ներկայացրեց մեղադրական քանկ, մասը, եւ ապա՝ ամբաստանեալներին յանցանքը ճանաչելու իր միջնորդութիւնը: Դատարանը պահանջեց ծանրագոյն պատիժ՝ մահապատիժ չորս ամբաստանեալներին (Արսէն Արծրունի, Արմենակ Մնջոյեան, Արմէն Գրիգորեան եւ Արմենակ Զաքարեան), իսկ տարրեր ժամկէտներով ազատագրուած՝ «ուժեղացուած ուժով» ուղղիչ աշխատանքային գաղութում»՝ Հրանդ Մարգարեանի եւ Յովհաննէս Մկրտչեանի (15 տարի), Եղիշ Միմոնեանի (10 տարի) եւ Գեղամ Մանուկեանի, Գևորգ Ալավերդեանի, Թաթուլ Գարրիշեանի ու Արա Հարմաշդարեանի (8 տարի) նկատմամբ: Բոլոր մեղադրեալներին համար դատարանը պահանջեց անձնական գոյքի բռնագրաւում (կից ներկայացուած է մեղադրական քանկ մասը):

Անդրադառնալով գործի նիւթերին եւ նպատակ ունենալով ապացուցելու ամբաստանեալներին ղեկավարուեցած մեղադրանքը՝ դատարանը անակնկալի բերեց զահլիճին, դատապաշտպաններին եւ դատական կոնցլիսին: Նշելով նոր հանգամանքներ, որոնք դատաքննութեան ընթացքում քննութեան առարկայ չէին դարձել եւ, հետեւաբար, չէին կարող ունենալ ապացուցողական ուժ, դատարանը փորձեց ապացուցել մեղադրանքները (յանցակագմը) եւ պահանջեց ծանրագոյն պատիժներ ընդարձակելու անհատներին նկատմամբ:

Քիչեւան գործը քաղաքականի վերածելու բացայայտ դիտարկութեամբ, դատարանը գրադարութիւն կատարեց Դաշնակցութեան հասցէին՝ նրան վերագրելով «Դրո» խմբակի հետ առնչութիւն ունենալու անհիմն մեղադրանքը: Ըստ պետական մեղադրողի՝ «քրէական գործի քննութեամբ բաւարար ապացույցներով ապացուցուել է, որ կատարուած յանցագործութիւնները հնարաւոր են դարձել Հ. Յ. Դ. որոշ մարմիններին

ՍԻՒՈՒՆԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱՍՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Ինչպէս նախապէս յայտարարած էինք, յառաջիկայ Հոգեգալտեան տօնին, Կիրակի, 26 Մայիս 1996, Անթիլիասի Մարալանքին մէջ տեղի պիտի ունենայ Սրբալոյ Միւռոնի օրհնութիւն՝ ձեռամբ Ն.Ս.Ս.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ մասնակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Եպիսկոպոսներուն ու Արքեպիսկոպոսներուն:

Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր աւանդութեան համաձայն, Սուրբ Միւռոնը պէտք է պատարասուի օրհնութեան թուականէն քառասուն օր առաջ, եւ գեղեցիկ Մայր Տաճարի խորանին վրայ: Հետեւաբար, այսօր՝ Չորեքշաբթի, 10 Ապրիլին, առաւօտեան ժամը 9ին, Մարալանքի բակին մէջ կը սկսին Սուրբ Միւռոնի պատարասութեան աշխատանքները, գլխաւորութեամբ Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ ու հսկողութեամբ Միաբան Հայրերուն: Աւելի քան քառասուն ծայղիկներու հոտաւոր արմատներու ու տեսակաւոր խումկերու ձեռնուած իւրեր պիտի փոխին յատուկ կարսակներու մէջ, քառասունութ ժամ:

Փափաքողները կրնան ալցել Մարալանք ու Միաբան հայրերու առաջնորդութեամբ եւ երկու դաժութեամբ հետեւիլ Միւռոնի պատարասութեան աշխատանքներուն:

ԴԻԻԱՆ ԿԼԹՈՂԻԿԻՆՈՒՍԱՐԱՆԻ

HI-TECH
COMPUTER
SERVICES

INTERNET-Ի
ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՏ
ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՏՈՒՅԻՉ

Ամսական միայն
65 \$
վճարելով ստացք
INTEL Pentium 120 տիպի
1 GigaByte Hard Diskով եւ
8 MBytes RAMով
համակարգիչ:

Հեռաձայնի տեղական
գիծով համակարգչային
INTERNET ցանցին
անդամակցելու,
ժամական վարձով անոր
միանալու կամ
ճամակարգութեան
կարելիութիւն:

ԼՈՒՈՒԿ ԱՍՏԱԿՃԱՐԻ ԴՐՈՒԹԻՒՆ
Պոլոճ Համուտ, հեռ. 584443, E-mail: hcs@inco.com.lb

ԻՐԱՆԻ ՄԷՋ
4 ԹՈՒՐԹ ԼՐՏԵՍ
ԳԻՒԱՆԱԳԷՏՆԵՐ
ՁԵՐԱԿԱՆԱՆՈՒՄԸ

ԹԵՀՐԱՆ, 9 (ՌԵՍԹԸՐ).- Իրան Երեքշաբթի օր յայտարարեց, որ երկրին արեւմտեան շրջանին մէջ ձերբարկուած է 4 թուրք զինանազկ տներ, որոնք լրտեսութիւն կ'ընէին եւ կ'աշխատէին լրտեսներու գաղտնի ցանց մը ստեղծել, վնասելու համար Իրանին:

Ձերբարկալեալներէն մէկը Թեհրանի մէջ թրքական դեսպանատան քաղաքական կցորդն է, երկու ուրիշներն ինչ մակարդակի պաշտօն կը վարեն Ուրմիոյ մէջ, իսկ չորրորդը՝ Թաւրիզի մէջ (հիւպատոսարաններու կցորդներ): Թեհրանի բանրերը ըսաւ, որ ձերբարկալեալները կը ծրագրէին նաեւ խափանարարական գործողութիւններ կազմակերպել: Ձերբարկալեալները խոստովանութիւնները ըրած են: Անոնց մօտ գտնուած են փաստաթուղթեր:

ԵԸԼՄԱԶ ՊԱՔՈՒ
ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

Երեւանեան մամուլ տեղեկութեանց համաձայն, Թուրքիոյ վարչապետ Մեսութ Երմաք 14 եւ 15 Ապրիլին Պաքու պիտի այցելէ, նախագահ Ալիեւի հետ խորհրդակցութիւններ ունենալու համար:

Կր նախատեսուի, որ երկկողմանի յարաբերութեանց կողքին, Արցախի հարցը կարեւոր տեղ ունենայ Թուրք-Իա-Ագրպէճան ալը բանակցութեանց:

Եւայլն

Մեկնելով իր այս վերագրումից, պետական մեղադրողը՝ «հասարակայնօրէն վտանգաւոր նման յանցանքը գործողութիւններին հետագայ կրկնութիւնից խուսափելու, դրանց հնարաւոր կատարումը խափանելու նպատակով» գտաւ, որ մասնաւոր որոշմամբ պէտք է անդրադառնալ այս հարցին: Դատարանի «խորին համոզմամբ՝ քննութեան նիւթերը միանգամայն ակնյայտ

ՈՒՍԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ
ԿԵՅԱՓԱՈՒ ՀԱՅՐԱԿԵՏԻՆ ՍՕՏ

Երէկ առաւօտ, Անթիլիասի Մարալանքը ալցելեց Լիբանանի մօտ Ռուսիոյ դեսպանը՝ Օլէկ Փերսիպքին, դեսպանատան գործադիրն ընկերակցութեամբ: Փոխադարձ ծանօթացման բնոյթ ունէր լիշեալ ալցելութիւնը, նկատի ունենալով որ դեսպանին նշանակումը տեղի ունեցած էր երեք շաբաթներ առաջ:

Դեսպանը յայտնեց Վեհափառ Հայրապետին, թէ Մոսկուայէն իրեն թելադրուած էր յատուկ ալցելութիւն տալ Անթիլիասի եւ բարեկամական յարաբերութիւններ մշակել Վեհափառ Հայրապետին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետ:

Այս առիթով դեսպանը նաեւ յայտնեց, որ ընդառաջելով Վեհափառ Հայրապետին հրաւերին, յառաջիկայ տարի Լիբանան պիտի այցելէ եւ նաեւ Կաթողիկոսարան, Ռուսիոյ Պատրիարքը՝ Ալեքսի Բ.:

Վեհափառ Հայրապետը իր գոհունակութիւնը արտայայտել ետք դեսպանին ալցելութեան ու բարեմադրութիւններուն համար, յայն բացատրութիւններ տուաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հառույցին ու առաքելութեան մասին: Վեհափառ Հայրապետը անգրադարձաւ Լիբանանի հայութեան եւ անոր բերած նպաստին Լիբանանի վերակազմուածի ու վերաշինութեան աշխատանքներուն: Վեհափառ Հայրապետը նաեւ յատուկ կարեւորութեամբ արձարձեց Ղարաբաղի հարցը եւ շեշտեց այս գծով Ռուսիոյ գործօն դերակատարութիւնը:

2	u	1	1		0	1	0	1	1
---	---	---	---	--	---	---	---	---	---

زیناک